ՀՈԴՎԱԾՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ
СТАТЬИ И СООБЩЕНИЯ

ԿՈՄՈՒՆԻԶՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՖՈՐՄԱՑԻԱ

Ա. Դ. ԱՂԱՅԱՆ

Հասարակական զարգացման բազմաբարդ շարժառիթների հարցը լուծելիս, գիտական սոցիալիզմի հիմնադիրներ Մարքսն ու Էնգելսը շեշտում էին, թե մինչև իրենց հրապարակ գալը, բուրժուական մտածողները պատմության ընթացքը դիտել են որպես բարացած փաստերի հավաքածո կամ օրինաչափություններից զուրկ մի անիմանալի քաոս։ Իրականում պրոլետարիատի երկու առաջնորդներին միայն հաջողվեց պատմության մատերիալիստական ըմբռնման տեսանկյունից բացահայտել և հիմնավորել հասարակական կյանքի անկասելի օրինաչափությունները, օրինաչափություններ, որոնց օբյեկտիվ զարգացումը մարդկությանը հասցնելու է կոմունիզմի հուսակայանը։

Գիտական ճշգրիտ մեկնակետից վերլուծելով հասարակական կյանքի առեղծվածները, նրանք հիմնավորեցին այն մեծ սկզբունքը, ըստ որի հասարակությունը յուրահատուկ օրենքներով զարգացող մի օրգանիզմ է, որը հիմնվում է մարդկանց տրամադրության տակ եղած արտադրողական ուժերի ու միմյանց միջև ունեցած արտադրական հարաբերությունների ամբողջության վրա։ Հասարակություն հասկացությունը մի այլ բան չէ, եթե ոչ այդ իսկ հարաբերությունների ռեալ մարմնացումը։

Հասարակական ողջ կյանքի համար արտադրական հարաբերությունները համարելով «հիմնական» և «սկզբնական», իսկ մնացած բոլոր հարաբերությունները՝ ածանցյալ, Մարքսն ու Էնգելսը ճշտորեն նշեցին հասարակական-տնտեսական ֆորմացիաները՝ նախնադարյան, ստրկատիրական, ֆեոդալական, կապիտալիստական և կոմունիստական։ Վերոհիշյալ ֆորմացիաների զարգացումը վերառնելով որպես բնապատմական պրոցես, մարքսիզմը խորտակիչ հարված հասցրեց բուրժուական սոցիոլոգիային։

Հասարակական-տնտեսական ֆորմացիայի մարքսիստական այդ հանճարեղ գաղափարը միայն «...հնարավորություն տվեց նշմարելու կրկնելիությունն ու կանոնավորությունը և ընդհանրացնելու տարբեր երկրների կարգերը հասարակական ֆորմացիա մի հիմնական հասկացության մեջ։ Հենց միայն այդպիսի ընդհանրացումն էր, որ հնարավորություն տվեց հասարակական երևույթների նկարագրությունից (և իդեալի տեսակետից կատարվող գնահատումից) անցնելու նրանց խիստ գիտական վերլուծությանը...»[1]։

Կապիտալիզմի ծագման ու զարգացման օրենքների մանրազնին հետազոտության հիման վրա Մարքսը հանգեց այն հետևության, որ շուտով հնչելու

---

[1] *Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 1, էջ 158։*

է ունեզրկողների ունեզրկման ժամը, որովհետև կապիտալիստական հասարակության ծոցում առնանում է նրա գերեզմանափորը՝ ռևոլյուցիոն պրոլետարիատը։ Կոմունիզմը, որպես կապիտալիզմի փլատակներից ընձյուղվող հասարակական բարձրագույն ֆորմացիա, կյանքի է կոչվում «պատմության մանկարարձուհու»՝ ռևոլյուցիոն բռնության օգնությամբ։

Մասնավոր սեփականությունը համարելով բանվորի օտարված աշխատանքի անխուսափելի հետևանք, Մարքսը բաղմակողմանիորեն հիմնավորեց այն բացառիկ արդասալի գաղափարը, որ աշխատանքը ոչ միայն արտադրության, այլև մարդու ու մարդկության զարգացման վճռական գործոնն է։ Հակառակ բուրժուական գաղափարախոսների, որոնք չէին ըմբռնում աշխատանքի կիրառման բացասական կողմերը (արտադրության եղանակի հակամարտ բնույթը կապիտալիզմի օրոք, մարդու ստրկացումը, բթացումը և հաշմումը), մարքսիզմը հասարակական բախումների արմատները որոնեց ու գտավ մասնավոր սեփականության պատճառը հանդիսացող մարդկային օտարված աշխատանքի մեջ։ Կապիտալիզմի օրոք է, որ ապաղակող չափերի է հասնում աշխատավորի այդ ինքնախորթացումը։

Որքան բանվորը շատ է արտադրում,— ասում է Մարքսը,—սպառելու այնքան քիչ հնարավորություն է ունենում. որքան շատ արժեքներ է ստեղծում, այնքան արագ և շուտ է կորցնում իր արժեքը և արժանիքները. որքան լավ է ձևավորված բանվորի ձեռքի արդյունքը, այնքան խեղված է ինքը. նրա արտադրած իրը որքան կուլտուրական է, այնքան ինքը նման է բարբարոսի. որքան հզոր է աշխատանքը, այնքան անզոր է բանվորը. որքան իմաստալի է նրա աշխատանքը, նա այնքան շատ է ենթարկվում մտավոր ամայության։

Կապիտալիստները տիրում են կապիտալին,— ասում էր Մարքսը,—որովհետև նրանց ձեռքում է մարդկության ողջ օտարված աշխատանքը։ Վերջինս խորշելի է, որովհետև այն իր էությամբ՝ հարկադրական է։

Սակայն շահագործման կապիտալիստական եղանակի կործանարար պայմաններն են, որ պրոլետարիատին մղելով դասակարգային դաժան կռվի բովը, թրծում են նրան այդ պայքարում այն աստիճանի, որ նա հանդես է գալիս պատմության թատերարեմում ոչ միայն իրրև ինքնիրեն կորցրած մարդու մարմնացում, այլև որպես այն միակ սոցիալական ուժը, որը ձեռք է բերում իր կորստյան տեսական ըմբռնում և պրակտիկ կարողություն՝ տապալելու կապիտալիստական ստրկությունը։ Պրոլետարիատին ռևոլյուցիան անհրաժեշտ է ոչ միայն բուրժուազիային տապալելու, այլև նրա համար, «որ խորտակող դասակարգը միայն ռևոլյուցիայի ընթացքում կարող է մաքրվել ամբողջ հին աղտեղությունից և ունակ դառնալ նոր հասարակություն ստեղծելու»[2]։

Այսպիսով, պատմագիտության մեջ առաջին անգամ մարքսիզմը եկավ հաստատելու, թե պատմության շարժիչ ուժը ոչ թե ենթադատությունն է, այլ ռևոլյուցիան։ Հետևաբար, աշխատանքի դարավոր օտարումը կարող է ոչնչացվել միայն կոմունիստական ռևոլյուցիայի միջոցով։ Վերացնելով մասնավոր սեփականությունը, կոմունիզմը պատմական հուշ է դարձնում մարդու ինքնաօտարման հազարամյա ողբերգությունը՝ վերականգնելով աշխատանքի կատարյալ էությունը։

---

[2] К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. I, IV, էջ 60.

Հոկտեմբերյան սոցիալիստական ռևոլյուցիան պերճախոս կերպով ցույց տվեց, որ ազատագրվելով կապիտալիզմի աղտեղությունից, մարդիկ «դառնում են բնության տերը, իրենք իրենց տերը, դառնում են ազատ», ինչպես կանխատեսում էր Էնգելսը։

Իհարկե, ֆեոդալիզմի համեմատությամբ կապիտալիստական ֆորմացիան խոշոր առաջխաղացում էր։ Դա արտահայտվում է նրանով, որ կապիտալը հավելյալ աշխատանքը քամում է այնպիսի եղանակներով, որոնք «արտադրողական ուժերի, հասարակական հարաբերությունների զարգացման համար և նոր, ավելի բարձր հասարակական կառուցվածքի տարրերի ստեղծման համար ավելի ձեռնտու են, քան ստրկության, ճորտատիրության և այլ նախկին ձևերի դեպքում»[3]։ Բայց հարցն այն է, որ կապիտալիստական ֆորմացիան չփոխեց և չէր էլ կարող փոխել աշխատավորների տնտեսական, քաղաքական ու հոգևոր կեղեքումը, մինչդեռ, իր ձևական ազատությամբ և կեղծ դեմոկրատիայով կապիտալիզմը «փայլուն կերպով քողարկում է» վարձու ստրկությունը։ Դրա համար Լենինն ասում էր, թե «կապիտալիզմը և բուրժուական դեմոկրատիան վարձու ստրկություն է»։

Մարքսիզմի հիմնադիրները կապիտալիզմի հետազոտությունից հանգեցին այն հետևությանը, որ «արտադրության կապիտալիստական եղանակի ներսում նիրհող հակասությունները» այնպիսի աղաղակող հակամարտության են հասել, որ հասարակական այդ ֆորմացիայի «վերահաս կրախը, այսպես ասած, կարելի է ձեռքով շոշափել, իսկ արտադրողական նոր ուժերը կարող են պահպանվել և հետագայում զարգանալ բացառապես արտադրության մի նոր եղանակի մտցնելու շնորհիվ»[4]։

Շարունակելով կապիտալիզմի վերջին՝ մոնոպոլիստական փուլի հետազոտումը, Լենինը մի շարք աշխատություններում ապացուցեց (դա հաստատեց և կյանքը), որ իմպերիալիզմի դարաշրջանում կապիտալիզմը գերհասունացել է։ «Այն մարդկության զարգացման ամենառեակցիոն արգելքը դարձավ»։ Այսօր, երբ կապիտալի աշխարհում մի խումբ մոնոպոլիստներ են իշխում, կապիտալիզմը գնալով մխրճվում է անելանելի և բզկտող հակասությունների մեջ։ Նրա ներքին ու արտաքին բախումները, «իմպերիալիստական պատերազմի ծնած սարսափները, քայքայումը,— այս ամենն անխուսափելի դարձրեց կապիտալիզմի կրախը և հասարակական տնտեսության ավելի բարձր տիպին անցնելը»,—ասված է ՍՄԿՊ Ծրագրում։

Եվ այդ անցումը պրակտիկորեն իրականացավ սրանից 44 տարի առաջ, երբ Հոկտեմբերյան ռևոլյուցիան մեր երկրի ընթացքը մղեց սոցիալիզմի հունով։ Իրականացավ ՍՄԿՊ-ի Ծրագրի այն թեզը, որի համաձայն «համաշխարհային կապիտալիստական սիստեմն ամբողջությամբ վերցրած հասունացել է, պրոլետարիատի սոցիալական ռևոլյուցիայի համար»։ Այդ ռևոլյուցիան ոչ միայն հնարավորություններ ընձեռեց մեր երկրում լիակատար ու վերջնականորեն ավարտելու կոմունիզմի առաջին փուլի կառուցումը, այլև հիմնիվեր ցնցեց համաշխարհային կապիտալիզմի սիստեմը, վերջինիս հակադրելով սոցիալիստական անպարտ լագերը։

---

[3] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. 3, մաս 2, էջ 359։

[4] Ֆ. Էնգելս, Անտի-Դյուրինգ, 1952, էջ 340։

Այսպիսով, «կոմունիզմը մարդու և բնության, մարդու և իր նմանի միջև եղած հակասության կատարյալ լուծումն է... ազատության և անհրաժեշտության, անհատի ու սեռի միջև եղած վեճի բուն լուծումն է։ Այն՝ պատմության առեղծվածի լուծումն է»[5]։

Նախորդ հասարակական շարժումներից կոմունիզմը տարբերվում է նրանով, որ արմատապես հեղաբեկում է գոյություն ունեցող բոլոր արտադրահարաբերությունների և սոցիալական այլ հարաբերությունների դարավոր հիմքերը։ Միայն պատմական մեծ ակտի՝ կոմունիստական ռևոլյուցիայի հետևանքով աշխատավոր մարդկությունը լիակատար հնարավորություն է ստանում իր բախտը դարձնելու ստանց շահագործողների։ Կոմունիզմը հաստատող սոցիալական ռևոլյուցիան է միայն ունակ վերջ դնելու հասարակական հակամարտական զարգացմանը, մարդուն ճզմող և այլանդակող խորթ ուժերին՝ հանուն մարդու լիակատար ինքնաճանաչման, ինքնատիրապետման և ինքնաիրագործման։ Պատմության մեջ առաջին անգամ սոցիալիստական ռևոլյուցիան է ապահովում արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների բախումնազերծ պրոցեսը, առաջինների սանձումը կազմակերպված հասարակության կողմից, ամբողջ հասարակության բնականոն ծաղկումը։

Պատմության հարուստ փորձից ելնելով (Փարիզյան կոմունան, Հոկտեմբերյան ռևոլյուցիան), մարքսիզմ-լենինիզմը վաղուց է ապացուցել, որ մարդկությունն իրական ազատության, կատարյալ հավասարության ու երջանկության թագավորությանը կարող է հասնել միայն բուրժուական պետական ապարատը փշրելու ու պրոլետարիատի դիկտատուրա հաստատելու միջոցով։ Իսկ պրոլետարիատին իշխանություն է պետք այնքան ժամանակ միայն, քանի դեռ մնում են դասակարգերը, սպառազինված կապիտալիստական պետությունները և քանի դեռ չի ստեղծվել լիակատար կոմունիզմ։

Անկասկած, կապիտալիզմից կոմունիզմին անցնելու ժամանակաշրջանում՝ XX դարում, հասարակական կյանքն անխուսափելիորեն ծնում է մի շարք քաղաքական նոր ձևեր՝ կոմունիզմի ուղին բռնած ժողովուրդների համար, բայց դրանց բոլորի էությունն անխուսափելիորեն մեկ է լինելու՝ պրոլետարիատի դիկտատուրան,—ասում է Լենինը։ Ո՛չ միայն տապալված շահագործողների դիմադրությունը ճնշելու, ո՛չ միայն սոցիալիզմի հայրենիքի վրա հարձակվող իմպերիալիստական դայլերի սհմանից պաշտպանվելու համար է, պետք պրոլետարիատին պետական իշխանությունը, այլև «բոլոր աշխատավոր ու շահագործվող մասսաներին նոր տնտեսաձևի համար» կազմակերպելու, դաստիարակելու ու նախապատրաստելու։

Պատմության մեջ մարդկությունն առաջին անգամ ոտք կոխեց կոմունիզմի ֆորմացիան՝ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակով. դրանով նշանավորվեց դեպի ազատության թագավորությունը կատարված մարդկության պատմական թռիչքը։

* * *

Հաղթանակած սոցիալիստական ռևոլյուցիայի առաջին և արմատական վերափոխիչ քայլը մեր երկրում, դա կապիտալիստների ու կալվածատերերի ունեզրկումը և նրանց նյութական հարստության բաղայի հիման վրա հան-

---

5 К. Маркс и Ф. Энгельс, Из ранних произведений, М., 1956, էջ 588.

բային-պետական տնտեսության կազմակերպումն էր։ Ամբողջ ժողովրդական տնտեսությունը վարելով նախապես մշակված պլանով, աշխատավորների շահերի թարգման Սովետական պետությունը կիրառեց տնտեսության անշեղ ինդուստրացման քաղաքական կուրսը։ Սա նշանակում է, որ մարդկային հոծ զանգվածները հնարավորություն ստացան գիտակցաբար դարձնելու իրենց բախտը, ուղղություն տալու արտադրողական ուժերի զարգացմանը։ Այս հիման վրա է, որ անհատը բռնեց իրական կատարելիության հունը։ Սա մե՜ծ, շատ մե՜ծ նվաճում էր։ Այսպիսով միայն վերջ դրավ աշխատանքի օտարման դարավոր այլանդակությունը։

Օգտվելով նոր տնտեսակարգի օբյեկտիվ օրենքների առավելություններից, սոցիալիստական պետության տնտեսավարման օրգանները սահմանում են հասարակական արտադրության ներդաշնակ զարգացման կառուցվածքը՝ իրական համամասնություններ և փոխանակային կապեր տարբեր տնտեսաճյուղերի, արտադրության և բաշխման, սպառման ու վերարտադրության, առաջարկի ու պահանջմունքի միջև։

ՍՍՌՄ-ի փորձը ցույց տվեց, որ սոցիալիստական հասարակության մեջ, որտեղ արտադրամիջոցները համաժողովրդական են, «հավելյալ արդյունքը պատկանում է ոչ թե սեփականատերերի դասակարգին, այլ բոլոր աշխատավորներին»։ Ի՞նչ է հետևում Լենինի այս ընորոշումից։ Այն, որ սոցիալիստական արտադրության նպատակը՝ հասարակության բոլոր անդամների բարեկեցության ապահովումն ու համակողմանի ծաղկումն է։ Ահա թե որն է ամենաարդար և ամենամարդկային կոմունիստական հասարակության գլխավոր բնութագիրը։

Ահա թե ինչու սոցիալիստական երկրի էկոնոմիկան ու տեխնիկան իրենց զարգացման տեմպերով ետ են թողնում ամենահզոր կապիտալիստական երկրներին։ Ահա թե ինչու սոցիալիստական ընդլայնված վերարտադրության արագ տեմպերին համընթաց՝ աճում են և սոցիալիզմի քաղաքացիների պահանջմունքները, որոնց համակողմանի բավարարման ոլորտում պետք է որոնել նոր հասարակության բարգավաճման խթանը։

Կոմունիստական հասարակության առաջին փուլի՝ սոցիալիզմի համար բնորոշ է այն, որ հանրային սեփականությունը գոյություն ունի երկու ձևով՝ համաժողովրդական (պետական) և կոոպերատիվ-կոլտնտեսային։ Տնտեսության այս երկու տիպերի բոլոր օղակների վարումը պլանավորող մի կենտրոնի կողմից ինքնին մեծագույն մի ազդակ է երկրի արտադրողական ուժերի բուռն վերելքի համար։ Բավական է վկայակոչել այն փաստը, որ այժմ ՍՍՌՄ-ն իր տնտեսական-տեխնիկական հզորությամբ այնքան է ամրացել, որ գալիք երկու տասնամյակներում իր ետևում կթողնի ԱՄՆ-ին։ Սոցիալիզմի զարգացման այս փառավոր ընթացքը հարկադրված խոստովանում են նույնիսկ բուրժուազիայի մի շարք գաղափարախոսներ։

Արտադրության սոցիալիստական եղանակի խոշորագույն առավելություններից մեկն էլ այն է, որ բոլոր մանր արտադրողներին համատեղելով կոլեկտիվ արտադրության հիմքի վրա, վերջիններիս համար հնարավորություններ է ստեղծում սոցիալիստական պրոլետարիատի հետ ընթանալու կոմունիզմի հունով։

Սոցիալիստական ողջ լագերի փորձով ապացուցված է, որ համաժողովրդական, գերակշռող պետական սեփականության պայմաններում կոոպե-

ռատիվ-կոլտնտեսային ձևն իր զարգացմամբ ընթանում է դեպի համաժողովրդական սեփականությունը։ Սա ըստ էության նշանակում է, որ առաջիկայում հետզհետե անէանում են գյուղի ու քաղաքի միջև ընկած էական տարբերությունները։ Կոլտնտեսային կարգը՝ գյուղացիությունն աստիճանաբար դեպի կոմունիզմ տանող լենինյան ուղին է, դա աշխատավորության կոմունիստական դպրոց է։

Սոցիալիզմի մեծ Հայրենիքում հասարակական տնտեսությունը զարգանում է պլանաչափ կերպով, համամասնական զարգացման օբյեկտիվ օրենքով. այն մի ամբողջական ներդաշնակ օրգանիզմ է, որի ծաղկման հնարավորություններն անսպառ են։ Դրա մեծագույն առհավատչյան այն իրողությունն է, որ սոցիալիզմի պայմաններում կեղեքումից ձերբազերծված ժողովուրդները կարող են իրենց ստեղծարար ջանքերով իրացնել բուն այդ սիստեմի ներթաքուն հնարավորությունները։ ՍՄԿՊ-ի դլխավորած ժողովրդի արարչագործ կորովը,—ահա թե որն է կոմունիզմի հաղթության անդրդվելի գրավականը։

Կիրառելով կոմունիզմի առաջին փուլի սկզբունքը՝ յուրաքանչյուրից ըստ ընդունակության, յուրաքանչյուրին ըստ աշխատանքի, սոցիալիստական հասարակությունը վճարում է իր անդամներին ըստ արտադրանքի քանակի ու որակի։ Այդ հանգամանքներում դա միակ արդարացի հատուցումն է, քանի որ մարդկանց աշխատանքային ծախսումների քանակն ու որակը միանգամայն դանազան են։ Վերոհիշյալ կանոնին համակցելով նաև աշխատանքի բարոյական խթանը՝ իրոք ապահովված է աշխատանքի արտադրողականության անընդհատ աճը։ Չէ՞ որ աշխատանքի արտադրողականության արագ աճի մեջ էր Լենինը դտնում սոցիալիզմի պատմական գերազանցությունը կապիտալիզմի հանդեպ։

Ընդ որում, որպես անխախտ օրենք, աշխատանքի արտադրողականությունը պետք է մշտապես առաջ անցնի (իր արդյունքների արժեմասսայով) աշխատավարձի ու հատուցման այլ ֆոնդերից։ Սա ոչ միայն ընդլայնված վերարտադրության բարձր տեմպերի երաշխիք է, այլև ստեղծում է ռեալ աշխատավարձի բարձրացմանը։ Հետևաբար, վերջինիս աճը, խթանելով աշխատանքի արտադրողականության վերելքին՝ իջեցնում է արտադրանքի միավորի ինքնարժեքը։

Այսպիսով, հետևողականորեն կենսագործելով ով աշխատի նա կուտի կանոնը, սոցիալիզմը սահմանում է աշխատանքի հաշվառք և սպառման չափ, որի հետևանքով տնտեսությունը ստանում է կուտակման ներքին մղում։

Սոցիալիստական ռևոլյուցիան բնորոշվում է ոչ միայն արտադրության, բաշխման ու կառավարման բոլորովին նոր հարաբերությունների արմատավորմամբ, այլև ճնշված ազգերի ազատագրմամբ, նրանց լիակատար իրավահավասարության, ինքնուրույն զարգացման պայմանների ապահովմամբ։ Աշխարհում միակ պարտիան, որը ճիշտ լուծեց ազգային հարցը, դա ՍՄԿՊ-ն է, որը միշտ առաջնորդվել է Լենինի այն դրույթով, թե «...ճնշող կամ այսպես կոչված՝ «մեծ» ազգի... կողմից ինտերնացիոնալիզմը պետք է կայանա ոչ միայն ազգերի ձևական հավասարությունը պահպանելու մեջ, այլև այնպիսի անհավասարության մեջ, որը ճնշող ազգի կողմից հատուցեր այն անհավասարությունը, որ փաստորեն առաջանում է կյանքում։ Ով չի հասկացել այս, նա չի հասկացել իրոք պրոլետարական վերաբերմունքը դեպի ազ-

գային հարցը, նա, ըստ Լենինյան, մնացել է մանր բուրժուական տեսակետի վրա, ուստի և չի կարող ամեն բոլոր չգլորվել դեպի բուրժուական տեսակետը»[6]։

Հետևողականորեն իրագործելով լենինյան այս պահանջը, ՍՄԿՊ-ն վաղուց հասել է այն բանին, որ ՍՍՌՄ տարբեր ազգությունները վերացնելով երբեմնի իրենց հետամնացությունը, դարձել են առաջավոր սոցիալիստական ազգեր, որոնք ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի, ուրույն սոցիալիստական պետականության և ժողովուրդների եղբայրական համերաշխության անանխընթաց օրինակներ են տալիս։ Որդեգրելով սոցիալիստական ինտերնացիոնալիզմի աշխարհայացքը, սոցիալիստական լագերի ժողովուրդները ներկայումս ապրում են իրենց հոգևոր ու նյութական ուժերի չտեսնված ծաղկումը։

Սոցիալիստական հասարակության գիմորոշ գծերից է նաև իրոր ժողովրդական կուլտուրայի ծաղկումը։ Իրագործելով կուլտուրական ռևոլյուցիա, ՍՍՌՄ-ը կարճ ժամանակամիջոցում դարձավ աշխարհի ամենաառաջավոր կուլտուրայի տեր երկիր, որի հարաճուն գիտությունն ու արվեստը գմայլանք են պատճառում համայն մարդկությանը։ Սովետական Միության ժողովուրդների կուլտուրական վերածնունդը մարքսիզմ-լենինիզմի աշխարհայացքի հիման վրա՝ հնարավոր է դարձնում ներկա սերնդի ուժերով կառուցել կոմունիստական հասարակություն։ Սոցիալիստական և կուլտուրական մեծագույն ռևոլյուցիաների բարերար հետևանքով պատմության մեջ առաջին անգամ անհատը վերագտավ իրեն։ Միայն սոցիալիզմին փարելով նա վեր բարձրացավ անասնական, նվաստացնող կենսամակարդակից, որին նա դատապարտված էր փողի քսակի իշխանության օրոք։ Նրա ֆիզիկական և մտավոր ձիրքերի զարգացման պայմանները միայն սոցիալիզմը բերեց։ Դրա համար էլ սովետական քաղաքացին հպարտ է իր վիճակի ու վեհ նպատակի գիտակցությամբ։

Նման մեծագույն առաջխաղացում հնարավոր դարձավ միայն այն բանի շնորհիվ, որ ընդամենը մի քանի տասնյակ տարում սոցիալիստական երկրում վերացան շահագործող դասակարգերը և կեղեքման բուն պատճառները։ «ՍՍՌՄ-ում մնացին երկու բարեկամ դասակարգեր՝ բանվոր դասակարգը և գյուղացիությունը։ Ընդ որում փոխվեցին նաև հենց այդ դասակարգերը»։ Համասեռ սոցիալիստական սեփականությունն ավելի ամրապնդեց այդ երկու դասակարգերի դաշինքը։

Մեր մեծ Հայրենիքում իրականացավ սոցիալիզմի կառուցման լենինյան հանճարեղ պլանը։ Սովետական ժողովրդի հերոսական աշխատանքի ու ՍՄԿՊ ղեկավարության շնորհիվ, ինչպես ասված է ՍՄԿՊ Ծրագրում, «...մարդկությունը ստացավ ռեալ կերպով գոյություն ունեցող սոցիալիստական հասարակարգ և փորձով ստուգված գիտություն սոցիալիզմի կառուցման մասին։ Դեպի սոցիալիզմ տանող գլխավոր ճանապարհը հարթված է։ Այդ ճանապարհով արդեն գնում են շատ ժողովուրդներ, այդ ճանապարհով վաղ թե ուշ կգնան բոլոր ժողովուրդները»։

ՍՍՌՄ-ի վճռական դերի շնորհիվ, երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Եվրոպայի ու Ասիայի մի շարք երկրների աշխատավորներին հաջողվեց թոթափել կեղեքիչների լուծը և ոտք դնել սոցիալիզմի ուղին։ Ստեղծվեց սոցիալիզմի համաշխարհային սիստեմ, որն այսօր արտահայտում է

6 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 36, էջ 703։

մարդկության ավելի քան մեկ երրորդի արդար ձգտումները։ Սոցիալիստական երկրների եղբայրական միասնությունը զորավիգ է նրանց լիակատար հաղթանակի, իմպերիալիզմի ոտնձգությունները խափանելու համար։ Բռնելով կապիտալիստական սիստեմի հետ անտեսական մրցության ուղին, սոցիալիստական լագերը մոտակա տարիներին կապահովի իր գերազանցությունը համաշխարհային կապիտալիստական սիստեմի նկատմամբ արտադրության ընդհանուր ծավալով։

Ամբողջ աշխարհն է տեսնում, որ գնալով արագորեն պարզանում է սոցիալիզմի համաշխարհային սիստեմը, որը դեպի իրեն է ձգում կապիտալի ճնշման և գաղութային լծի տակ հեծող բոլոր ժողովուրդներին։ Մեր աչքերի առջև այն ամրապնդվում և դառնում է մարդկային հասարակության առաջադիմության որոշիչ գործոն։ Ահա թե ինչու մեր պարտիայի պատմական XXII համագումարը առանձնապես շեշտեց, որ «այժմ ոչ թե իմպերիալիզմը, այլ սոցիալիզմն է որոշում համաշխարհային զարգացման գլխավոր ուղղությունը»:

* * *

Ոչ միայն Սովետական Միության և սոցիալիստական լագերի ժողովուրդները, այլև ամբողջ աշխարհի կեղեքվող մասսաները ու առաջավոր մարդկությունը ջերմ խանդաղատանքով և վառ ակնկալումներով ընդունեցին ՍՄԿՊ XXII համագումարի ավետաբեր ձայնին, համագումար, որը, հռչակելով կոմունիզմի պրակտիկ կառուցման անդրանիկ ծրագիրը, մարդկային տարեգրության մեջ մտավ որպես պատմական եղելություն։ Մարդկության ռեալ երջանկության ուղիները նշող այդ համագումարի որոշումները և կոմունիստական ֆորմացիայի երկրորդ փուլի իրականացման վիթխարի կանխագծումները վճռական ներգործություն են ունենում ամբողջ մարդկության հետագա ընթացքի վրա։

Ուստի և պատահական չէ, երբ անգլիական պահպանողական «Օբսերվեր» թերթը պարտիայի համագումարի օրերին դառնությամբ նշում էր, թե ՍՄԿՊ նոր Ծրագիրը «կարող է բորբոքել ժողովրդական երևակայությունը և մոբիլիզացնել սովետական հասարակության ուժը, դա անկասկած է։ Նույնքան արդարացի է և այն, որ Արևմուտքի պետական գործիչներն իրենց ժողովուրդներին ապագայի և ոչ մի հեռանկար չեն առաջարկում, որը կարողանար համեմատվել դրա հետ իր գրավչությամբ»։ Ուշացա՜ծ, բայց ճշմարի՜տ խոստովանություն։

Մարդկությունը արագ քայլերով մտնում է հասարակական զարգացման կոմունիստական ֆորմացիան։ Սովետական մարդկանց համար միանգամայն պարզ է պարտիայի նոր Ծրագրի իմաստը. դա մեր ժողովրդի նյութական և հոգևոր հարստության, նրա բարեկեցության վիթխարի պլանն է, որի կենսագործմամբ քսան տարվա ընթացքում մեր երկրում հիմնականում կկառուցվի կոմունիստական հասարակություն։

Եթե սոցիալիզմը, որպես կոմունիստական ֆորմացիայի առաջին փուլը, «զարգանում է ոչ իր սեփական հիմքի վրա» ու դեռևս իր մեջ հնից շատ բան է պարունակում, ապա կոմունիզմը կարող է սկսվել և սկսվում է մեր երկրում միայն իր սեփական՝ սոցիալիստական կայուն պատվանդանի վրա։ Այն, որ կոմունիզմը զարգանում է իր սեփական հիմքի վրա,— ասում է Ն. Ս. Խրուշ-

չովը,— կանխորոշում է նրա կառուցման պրոցեսի առանձնահատկությունները. բացակայում է շահագործումը, կոմունիզմի հաղթությամբ շահագրգռված են բոլոր աշխատավորները, որոնք գիտակցաբար ձգտում են այդ բանին, նոր կյանքը ստեղծվում է ամենադեմոկրատիկ մեթոդներով, հետևեռեռ կատարելագործվում են հասարակական հարաբերությունները, կյանքի հին ձևերը մահանալով (սակայն պայքարով) տեղի են տալիս նոր կենսաձևերի, նոր վարքագծի առաջացումներ և այլն։

Այսպիսի զարգացում անպայման կլինի պարտիայի նոր Ծրագրում առաջադրված մեր երկրի գլխավոր տնտեսական խնդրի կենսագործմամբ՝ կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումով։ Այդ բազան պետք է ստեղծվի քսան տարում։ Առաջիկա երկու տասնամյակներում ՍՍՌՄ-ն կունենա արտադրողական ուժերի այնպիսի մակարդակ, որը կապահովի մեզ համար աշխարհում առաջին տեղը՝ շնչին հասանելիք արտադրանքի արտադրությամբ, աշխատանքի արտադրողականությամբ, նյութական և հոգևոր բարիքների առատությամբ և բնակչության կենսամակարդակով։ Սոցիալիստական արտադրական հարաբերությունները աստիճանաբար վերափոխելով կոմունիստականի, հաղթահարելով գյուղի ու քաղաքի էական տարբերությունները, մեր երկրում կստեղծվեն բոլոր ռեալ նախապայմանները հետագայում մարդկանց բավարարելու ըստ պահանջմունքների և հասնելու անդասակարգ հասարակության։ Կառուցելով կոմունիզմի նյութատեխնիկական բազան ՍՍՌՄ-ը անպայման կշահի կապիտալիզմի հետ վարած տնտեսական մրցումը և իր պաշտպանողական հզորությամբ ի վիճակի կլինի անհապաղ խորտակելու ամեն մի ագրեսորի։

Առաջիկա քսան տարում ժողովրդական տնտեսության կապիտալ ներդրումները կկազմեն 2 տրիլիոն ռուբլի։ Սա այնպիսի մեծություն է, որը զբաղվելու է նորագույն կյանքի հիմքերի հիմքում, դառնալու է գործարան, ֆաբրիկա, սովխոզ, մեքենաներ և բարեկեցություն։ Այդ ժամանակամիջոցում ՍՍՌՄ-ի արտադրանքի ծավալը կավելանա 6 անգամ, որի հետևանքով մեր երկիրը շատ առաջ կանցնի ԱՄՆ-ից։ Արդյունաբերության հսկայական ընդլայնմանը ոնթացակցելու է աշխատանքի արտադրողականության չորս ու կես անգամ բարձրացում։ Յոթմգոնյան մեր այս առաջընթացը նշանակում է ոչ այլ բան, բան այն, որ 1980 թ. աշխատանքի արտադրողականությամբ մեր երկիրը 2 անգամ գերազանցելու է ԱՄՆ-ի ներկա մակարդակը։

Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի կառուցման անմիջական պահանջով խոշոր տեղաշարժեր են կատարվելու երկրի արդյունաբերության կառուցվածքի մեջ։ Գնալով ծավալվելու են ու զարգանալու ժամանակակից արդյունաբերության տեխնիկապես ամենառաջավոր ճյուղերը։ Մեծ չափով կաճի սինթետիկ նյութերի, բարձրորակ մետաղների տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության բալանսում. երկիրը կհագենա ավտոմատիկայի և էլեկտրոնիկայի հարյուր հազարավոր տարբերով ու մեքենաներով։ Ժողովրդի բարեկեցության առավելագույն բարձրացման նպատակով, քսան տարվա ընթացքում մեծ չափերով կընդարձակվի ժողովրդական սպառման ապրանքների արտադրությունը։

Կոմունիզմ կառուցողների պարտիայի Ծրագրի համաձայն, առաջիկա քսան տարիներին մեր երկրի էկոնոմիկան, 1960 թ. մակարդակից կբարձրանա մեծագույն չափերով։ Այսպես, օրինակ, արդյունաբերության համախառն արտադրանքը,

տաղրանքը կավելանա (1960 թ. համեմատ) 6,4 անգամ, արտադրամիջոցների արտադրությունը՝ 8,7, սպառման առարկաների արտադրությունը՝ 5,2, էլեկտրաէներգիան՝ 10,3, գազը՝ 15,2, մեքենաշինությունը և մետաղամշակությունը՝ 11, սինթետիկ ձյութերը և պլաստմասսան՝ 63, արհեստական և սինթետիկ թելանյութերը՝ 15,6 և ցեմենտը՝ 5,2 անգամ։

Մեր պարտիայի Ծրագիրը ամրողջապես տոգորված է Լենինի այն ցուցումով, որ կոմունիզմը կարող է իրականանալ միայն առաջավոր գիտության օգնությամբ։ Եվ այժմ չկա մեր կյանքի մի ասպարեզ, որտեղ սովետական գիտությունը չօգնի մարդկանց ստեղծելու նոր, լուսաշող հանրակեցություն։ Առաջավոր գիտության թելադրանքով առաջիկա տարիներին առավել կատարելագործվելու է արտադրության տեխնոլոգիան, տնտեսավարման կուլտուրան, տնտեսության առավելագույն մասնագիտացումն ու կոոպերացումը։ Արդյունաբերության ավտոմատացումը, քիմիայի վիթխարի առաջխաղացումը, նորագույն նյութերի կատարյալ մեթոդներով մշակումը և կիրառումը ոչնչ հիմքեր կստեղծեն ժողովրդի բարեկեցության արագ վերելքի համար։ Ամբողջ արտադրության նորացում՝ գիտության ու տեխնիկայի վերջին խոսքի համեմատ։ Ահա թե ինչ ուղղությամբ է ընթանալու ՍՍՌՄ ժողովրդական տնտեսությունը։

ՍՄԿՊ Ծրագրում հստակորեն երևում է նրա մեծագույն հոգատարությունը ժողովրդի բարօրության հանդեպ։ Արտադրական բոլոր պրոցեսների և աշխատանքի կազմակերպման նախատեսվող արմատական վերակառուցումը միայն այդ է վկայում։ Ծրագիրը խոսում է այն մասին, որ պարտիան ելնելով գիտական կոմունիզմի մեծ ուսուցիչներ Մարքսի, Էնգելսի, Լենինի ուսմունքից, իրեն նպատակ է դրել «ոչնչացնել աշխատանքի բաժանումը», որ այլանդակում է մարդուն, աղքատացնում է նրա հոգեկան ներքին աշխարհը։ Չէ՞ որ տակավին Մարքսն է նկատել, որ գիտակից պրոլետարիատի համար աշխատանքի բաժանման վերացման հարցը «մահու և կենաց հարց է»։ Ընթանալով այդ ճանապարհով, սովետական քաղաքացին կդառնա իրոք բազմակողմանի զարգացած անձնավորություն, որի համար հասարակական տարբեր ֆունկցիաների կատարումը հանդիսանում է կյանքի գործունեության եղանակ։ Մարքսի այս վսեմ մտքով է տոգորված մեր պարտիայի ամբողջ Ծրագիրը։

Այժմ արդեն արագորեն փոխվում են սովետական մարդիկ իրենց տեխնիկական ու աշխատանքային նոր պայմանների համեմատ։ Ակադեմիկոս Ստրումիլինի հավաստիացումով, մեր երկրում եղած մի քանի հազար պրոֆեսիաներից ու մասնագիտություններից այժմ փաստորեն մնում են 318-ը։ Ավտոմատիզացիան դալիս է արագ կերպով վերացնելու հին պրոֆեսիաները, աշխատողին հաղորդելու անհամեմատ շատ գիտելիքներ։ Այդ բանի հետևանքով սկսում են անհետանալ աշխատանքի բաժանման երբեմնի բնորոշ գծերը։ Աշխատավորության կրթական մակարդակի բարձրացումը, ուսման և աշխատանքի միակցումը նշանակալիորեն վերացնում է հին բանվորի սահմանափակությունը։

Պարտիայի և ժողովրդի կոլեկտիվ կամքով դրված կոմունիզմի ուղիները պակաս հրապուրիչ չեն և գյուղատնտեսության ասպարեզում։ Պարտիան ձգտում է մի բանի՝ հասնել ժողովրդի համար բարձրորակ մթերքների և արդյունաբերության համար հումքի առատության։ Գյուղատնտեսության արտա-

գրողական ուժերի հուժկու վերելքի բաղայի վրա պարտիան ձգտում է ապահովել սովետական գյուղի աստիճանական անցումը կոմունիստական հասարակական հարաբերությունների և հիմնականում վերացնել քաղաքի ու գյուղի միջև եղած տարբերությունները։

Վեր է կասկածից, որ ՍՄԿՊ-ի վերոհիշյալ կանխադրումները կիրագործվեն ժամանակին և արդյունավետ կերպով։ Դա հնարավորություն կտա գյուղատնտեսական արտադրանքի ընդհանուր ծավալը մեծացնել 3,4 անգամ։ Առաջիկա տասնամյակում մենք կանցնենք ԱՄՆ-ին մեկ շնչին ընկնող հիմնական գյուղատնտեսական մթերքների արտադրության մեջ։ Ավելի քան երկու անգամ ավելացնելով հացահատիկի կուլտուրաների համախառն արտադրությունը, մեր երկրում կստեղծվի կոմունիստական առատության կարևոր հիմքը։ Մսի, կաթի և գյուղատնտեսական այլ մթերքների արտադրության արագ աճը մեծապես կնպաստի ժողովրդի կենսամակարդակի բարձրացմանը։

Որքան ոգևորիչ է և բնորոշ, երբ առաջիկա քսան տարում աշխատանքի արտադրողականությունը գյուղատնտեսության մեջ բարձրանալու է 5—6 անգամ։ Պատմական այս մեծ թռիչքը կկատարվի գյուղատնտեսության արագ մեքենայացման, էլեկտրիֆիկացման, տնտեսության բոլոր ճյուղերը գիտականորեն վարելու հիման վրա։

Սովետական Միության ծաղկող էկոնոմիկան հիմք է տալիս պարտիային հռչակելու ամբողջ աշխարհի առջև իր նվիրական իդեալի կենսագործման կոնկրետ միջոցառումները. «ՍՄԿՊ-ն դնում է համաշխարհային պատմական նշանակություն ունեցող խնդիր՝ Սովետական Միությունում ապահովել ամենաբարձր կենսամակարդակ՝ կապիտալիզմի յուրաքանչյուր երկրի համեմատությամբ»։ Այս վեհ խնդրի իրագործման հաստատուն առհավատչյան այն է, որ քսան տարում հինգ անգամ աճելու է ՍՍՌՄ ազգային եկամտի ծավալը։

Կոմունիզմի ճանապարհին մեր երկրի հասարակական կյանքում կատարված էպոխաշեն փոփոխությունների շարքը պետք է դասել այն, որ սոցիալիստական պետությունն արդեն թևակոխեց իր գոյության նոր փուլը, որը նշանավորվում է ճնշման ֆունկցիայի անէացմամբ և տնտեսական-կազմակերպչական, կուլտուր-դաստիարակչական ֆունկցիաների զարգացմամբ։ «Սկսվեց պետությունը՝ սոցիալիստական հասարակարգի աշխատավորների համաժողովրդական կազմակերպության վերանալու պրոցեսը»։ Սոցիալիստական դեմոկրատիայի առավել ծավալում ու կատարելագործում, աշխատավորական հոծ զանգվածների ներգրավում պետական շինարարության բոլոր մարզերում՝ այս ուղղությամբ է ընթանալու սոցիալիստական կառավարումը կոմունիզմի կառուցման ժամանակաշրջանում։

Այդ ժամանակաշրջանի երևելի փոփոխություններից է և այն, որ մեր մարքս-լենինյան պարտիան, որը ստեղծվեց որպես բանվոր դասակարգի պարտիա, դարձել է ամբողջ ժողովրդի պարտիա, նշում է Ն. Ս. Խրուշչովը։ Իրականում այդպես է, որովհետև սովետական ժողովուրդն ու պարտիան կապված են շահերի ու աշխարհայացքի միասնությամբ։ Առաջիկա տարիներին ավելի կբարձրանա պարտիայի ղեկավար դերը, ավելի կամրապնդվի նրա միասնությունը ժողովրդի հետ, ավելի կզարգանա ներպարտիական դեմոկրատիան, ավելի կուռ կդառնան նրա միասնական շարքերը։

Վերջին տարիները մեր երկրում նշանավորվեցին նրանով, որ պարտիայի XX համագումարի կամքով վերականգնվեցին պարտիական կյանքի լենինյան

նորմերը։ «Սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման համար, միջազգային ամբողջ կոմունիստական շարժման համար հսկայական նշանակություն ունեցավ պարտիայի, նրա Կենտրոնական Կոմիտեի կողմից Ի. Վ. Ստալինի անձի պաշտամունքի բացահայտ ու համարձակ դատապարտումը։ Պարտիան ժողովրդին ասաց ամբողջ ճշմարտությունը անհատի պաշտամունքի ժամանակաշրջանում իշխանության չարաշահումների մասին և վճռականապես դատապարտեց անհատի պաշտամունքի իրազրության մեջ ծնունդ առած սխալները, խեղաթյուրումներն ու լենինիզմի ոգուն խորթ մեթոդները։ Պարտիան քննադատեց անհատի պաշտամունքը, հաղթահարեց անցյալի խեղաթյուրումներն ու սխալները, հաստատակամորեն կենսագործում է այնպիսի միջոցառումներ, որոնք լիովին բացառեն ապագայում նման սխալների կրկնման հնարավորությունը»[7]։

Սերտ, միաձույլ շարքերով Սովետական Միության ժողովուրդները հարատևատ պարտիայի ղեկավարությամբ այժմ արդեն կերտում են կոմունիզմի լուսավոր պալատը։ Կերտում են այն հասարակությունը, որը բերում է ամբողջ մարդկությանը լիառատ կյանք և կատարյալ երջանկություն։ Կոմունիզմը հենց այսօր սկսում է թափանցել մեր կյանքի մեջ։ Այն նոր ծիլեր է տալիս ու բարձրանում գործարաններում և ֆաբրիկաներում, կոլտնտեսություններում և սովխոզներում, մեր կյանքի բոլոր բնագավառներում։ Ամբողջ երկիրը ընթանում է դեպի այն հասարակությունը՝ կոմունիզմի հասուն փուլը, որի դրոշի վրա գրված է՝ յուրաքանչյուրից ըստ ունակության, յուրաքանչյուրին ըստ պահանջմունքի։

Պարտիայի նոր Ծրագրի հաջող իրագործումով մեր հասարակությունը մոտենում է լիակատար հավասարության թագավորության, մարդու ազատ ու բազմակողմանի ծաղկման, մարդու, որի համար կարճատև աշխատանքը դառնալու է կենսական անհրաժեշտություն։

Այդ լուսավոր հասարակության ճանապարհին մեր ժողովրդին զորավիգ է ՍՄԿՊ-ի վարած խաղաղ գոյակցության լենինյան իմաստուն քաղաքականությունը։ Խաղաղության տենչը ամբողջովին բխում է կոմունիզմի էությունից, նրա վերջնական հաղթանակի վճռական նախապայմանն է։ Կոմունիզմ կառուցող միլիոններն իրենց ստեղծագործ աշխատանքով ամրացնում են խաղաղության հիմքերը։ Կոմունիստաբար աշխատող և գործող սովետական քաղաքացիները խաղաղության բախտն են կռում։ Կոմունիստական կյանքի ծիլերը լենինյան արևի տակ փարթամորեն ծլարձակում են ու տարածվում երկրամեկ։

Սովետական ժողովուրդը խորապես ըմբռնում է առատության ստեղծման, նոր մարդու ձևավորման, կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման վիթխարի խնդիրների թե՛ վեհությունը և թե՛ դժվարությունները։ Եվ նա պատրաստ է աշխատանքով և ամենից առաջ աշխատանքով հաղթահարելու այդ դժվարությունները վսեմ նպատակին հասնելու համար։

---

7 «Սովետական Միության Կոմունիստական պարտիայի XXII համագումարի բանաձևը», Հայպետհրատ, 1961, էջ 28—29։

КОММУНИЗМ — ВЫСШАЯ ФОРМАЦИЯ ОБЩЕСТВЕННОГО РАЗВИТИЯ

А. Г. АДОЯН

(Резюме)

До Маркса и Энгельса буржуазная историография не сумела осознать и выявить подлинные причины и закономерности развития общественной жизни. Исходя из материалистического понимания истории, марксизм выявил и подверг всестороннему анализу социально-экономические силы общественного развития, реальные основы антагонизма капиталистического общества и научно обосновал неизбежность коммунистической формации. Считая производственные отношения основными и первоначальными, марксизм различные общественно-экономические формации рассматривает как естественно-исторический процесс, тенденцией которого является гибель капитализма и установление коммунистического строя.

Несмотря на прогрессивность капитализма по сравнению с феодализмом, в империалистической стадии своего развития капитализм стал препятствием для прогресса общества, вследствие чего неизбежен переход к более высокой общественной формации.

Благодаря героическому труду советского народа и руководству КПСС социализм в нашей стране одержал полную и окончательную победу. С построением первой фазы коммунизма — социализма — и с возникновением мировой социалистической системы, в истории человечества произошли новые эпохальные изменения. *Теперь уже социализм определяет основное направление мирового развития.* Это означает, что в условиях мирного соревнования двух систем обеспечена победа коммунизма и окончательный крах капитализма. Своими решениями и принятой Программой XXII съезд КПСС провозвестил грандиозный план построения коммунистического общества. Впервые в истории Советская страна вступает во вторую фазу коммунизма, знаменующуюся высокой производительностью труда и небывалым ростом благосостояния народа.